# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին»

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---------- 2020 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 1183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. **Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի N 1986-Ն և 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 2114-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»** N 1183-Ն որոշման հավելվածի՝

- 2-րդ կետում՝

**ա.** լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր «դ» և «ե» ենթակետեր՝

«դ) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հիմնադրված բարձրագույն ուսումնական հաստատություններ սահմանված կարգով առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունված և անվճար համակարգում չընդգրկված երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին (այսուհետ՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցողներ) .

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 430-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և

ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած սովորողներին (այսուհետ՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքած սովորողներ) :».

**բ.** վերջին պարբերության մեջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Երկու և ավելի անչափահաս երեխա ունեցողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու պահից մինչև ծրագրի ավարտը, բայց ոչ ավել, քան երեխաների չափահաս դառնալը:»:

**2)** 2.1 կետում «կրթության և գիտության նախարարության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն)» բառերով.

**3)** 2.2 կետում հանել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության» բառերը.

**4)** 2.3 կետում՝

**ա**. «սեպտեմբերի 10-ը» բառերը փոխարինել «սեպտեմբերի 30-ը» բառերով,

**բ**. լրացնել նոր նախադասություն՝

«Բարձրագույն ուսումնական հաստատությունները մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 20-ը նախարարություն են ներկայացնում սույն կարգի 2.1 կետով սահմանված ուսանողների խմբերի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան ֆինանսական միջոցներ ստանալու համար:»:

**5)** 2.4 կետում հանել «Ըստ կրթական աստիճանների մասնագիտությունների համապատասխան միավորի (մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ միջին որակավորման գնահատականի) նվազագույն շեմերը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:» նախադասությունը:

**6)** լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.6–րդ կետ.

«2.6 Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի՝ 20 տոկոսի չափով փոխհատուցում տրամադրում է նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգում չընդգրկված 2016 թվականի ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարտական հերթապահություն իրականացրած (զինվորական գրքույկում համապատասխան նշման կամ զինվորական կոմիսարիատի կողմից տրամադրած տեղեկանքի առկայությամբ) առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողներին՝ ըստ առաջադիմության:»:

**7)** 4-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասություն.

«Սույն կետի պահանջները չեն տարածվում ՀՀ պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքած սովորողներ վրա։»:

**8)** 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Առաջին կուրսում պետական կրթաթոշակ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ տեղերում ընդունված բոլոր ուսանողներին։»:

**9)** լրացնել նոր՝ 13.1 կետ՝

«13.1 Պետական կրթաթոշակ չի տրամադրվում ՀՀ պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքած սովորողներին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։